ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր 10.01.2024թ. հ.076 գրության՝ Երևանի քաղաքապետի 04.01.2024թ. «Ավտոկայանատեղի վճարի վճարման արտոնություն ու անվճար կայանման թույլտվության կտրոն տրամադրելու մասին» հ.4-Ա որոշման վերաբերյալ մանրամասն և լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ, տեղեկացվում է, որ Երևան քաղաքի ավագանու 26.12.2023թ. հ.45-Ն «Երևան համայնքում 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետին և 2-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան.

9) ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամություն ունեցող անձի կամ այդպիսի հաշմանդամություն ունեցող անձին կամ հաշմանդամություն ունեցող երեխա (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) փոխադրող տրանսպորտային միջոց ղեկավարող անձանց համար 2024 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

2-րդ կետ, 3-րդ ենթակետ.

3) Սույն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետում նշված դեպքում՝ սույն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետում նշված անձանց կողմից Երևանի քաղաքապետին ուղղված դիմումը, որին կցվում են հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը հավաստող, այդ թվում՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի որոշման, ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի, վարորդական իրավունքի և օրենքով նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Քաղաքացի Ստեփան Գոմկցյանը՝ որպես ավտոտրանսպորտային միջոց ղեկավարող, տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամություն ունեցող անձ, 2024 թվականի համար ավտոկայանատեղի վճարի վճարման արտոնություն ստանալու համար Երևանի քաղաքապետին հասցեագրած դիմում է ներկայացրել (30.11.2023թ. Դ-149765-23)՝ կից փաստաթղթերով՝ անձնագիր, վարորդական իրավունքի վկայական, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր, բժշկասոցիալական փորձաքննական որոշում:

Ուսումնասիրելով Ս.Գոմկցյանի դիմումին կցված փաստաթղթերը, մասնավորապես բժշկասոցիալական փորձաքննական որոշումից պարզվել է, որ Ստեփան Գոմկցյանի համար սահմանված է հաշմանդամության 2-րդ խումբ և հաշմանդամության ժամկետ է սահմանված մինչև 01.05.2024թ.:

Երևանի քաղաքապետի կողմից 04.01.2023թ. հունվարի 4-ի հ.4-Ա որոշմամբ քաղաքացի Ստեփան Գոմկցյանին տրամադրվել է ավտոկայանատեղի վճարի վճարման արտոնություն (մինչև 2024թ. մայիսի 1-ը ժամկետով) ու անվճար կայանման թույլտվության կտրոն (քարտուղարությունից ստացել է 09.01.2024թ.), սակայն ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարությունից՝ ի պատասխան Ս.Գոմկցյանի վերաբերյալ աշխատակազմի քարտուղարի թիվ 04/4912 հարցման, թիվ 3617-24 գրությամբ տեղեկացվել է, որ Ստեփան Գոմկցյանի համար ինքնուրույն տեղաշարժվելու կարողության սահմանափակման աստիճան որոշված չէ:

Հաշվի առնելով վերը նշվածը, կազմվել է Երևանի քաղաքապետի որոշման նախագիծ, Երևանի քաղաքապետի՝ Ստեփան Գոմկցյանին «Ավտոկայանատեղի վճարի վճարման արտոնություն ու անվճար կայանման թույլտվության կտրոն տրամադրելու մասին» 04.01.2024թ. հ.4-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Գրությանը կից ներկայացված կարգադրության վերաբերյալ, տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ 2023թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվել է «Երևանը կանանց համար» դրամաշնորհային ծրագիրը:

Կին արվեստագետների ստեղծագործական գործունեության խթանման, արվեստի և գրականության ոլորտում գործունեություն ծավալող կանանց կողմից ստեղծված գեղարվեստական/մշակութային արժեքների տարածման, արժևորման, հանրահռչակման, արվեստի և մշակութային կյանքի տարբեր բնագավառներում կանանց ներգրավվածության, ներկայացվածության ու հանրային ճանաչման մեծացման նպատակով իրականացվող ծրագիրը կազմակերպվել է արվեստի կրթություն (մագիստրոսական կրթության 4 դրամաշնորհ), գրականություն (գրական մրցանակ), գեղարվեստ (քաղաքային քանդակ), թատերարվեստ (պիես և բեմադրություն) և երաժշտարվեստ (երգ և կոմպոզիցիա) ուղղություններով:

Արդյունքում՝ մագիստրոսական ծրագրերով արվեստի և մշակույթի ոլորտում ՀՀ-ում և արտերկրում ուսումնառություն ստացող 4 իգական սեռի անձանց կհատկացվի նպաստ՝ 500.0 հազարական ՀՀ դրամի չափով (ընդհանուր՝ 2 մլն ՀՀ դրամ):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ